ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

№ 6 - Լ

«17» 05 2023 թ. ք. Երևան

«ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԵՐԹԱՓՈԽԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌՆՈՒՏԻ ՋՐԱՄԲԱՐԻ ՊԱՏՎԱՐԻ ՓԼՈՒԶՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 5-Լ հրամանով հաստատված ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) կանոնադրության 22-րդ կետի 4-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Փրկարար ծառայության տնօրենի 2022 թվականի դեկտեմբերի 5-ի N 17/2142-Լ հրամանով հաստատված «Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության 2023 թվականի աշխատանքային պլան»-ի 1.2.6 կետի կատարումն ապահովելու նպատակով, 2023 թվականի հուլիսի 31-ին ՆԳՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում (այսուհետ՝ ՃԿԱԿ) անցկացնել «Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ հերթափոխի անձնակազմի գործողությունները Կառնուտի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում» թեմայով շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ուսումնավարժություն):

2. Նշանակել՝

1) ուսումնավարժության ղեկավար՝ ՓԾ ՃԿԱԿ պետ, փ/ծ գնդապետ Արսեն Մկրտչյանին.

2) ղեկավարման շտաբի պետ՝ ՔԾ ՃԿԱԿ օպերատիվ հերթափոխերի բաժնի (այսուհետ՝ ՕՀԲ) պետ, փ/ծ գնդապետ Աշոտ Գրիգորյանին:

3. Ղեկավարման շտաբում ստեղծել հետևյալ աշխատանքային խմբերը՝

1) կազմակերպչական խումբ՝

ա. ՔԾ ՃԿԱԿ ՕՀԲ օպերատիվ հերթափոխի (այսուհետ՝ ՕՀ) պետ, փ/ծ փոխգնդապետ Հարություն Չեբեյան (խմբի ղեկավար),

բ. ՔԾ ՃԿԱԿ ՕՀԲ ավագ հրահանգիչ, փ/ծ փոխգնդապետ Դավիթ Մուրադյան,

գ. ՔԾ ՃԿԱԿ ՕՀԲ հրահանգիչ, փ/ծ մայոր Արթուր Վարդանյան,

դ. ՔԾ ՃԿԱԿ ՕՀԲ հրահանգիչ, փ/ծ մայոր Արթուր Վեյյան,

ե. ՔԾ ՃԿԱԿ 911 ԱԿ ավագ հրահանգիչ, փ/ծ փոխգնդապետ Անուշ Պետրոսյան,

զ. ՔԾ ՃԿԱԿ տեղեկատվության ապահովման և վիճակագրության բաժնի (այսուհետ՝ ՏԱՎԲ) ավագ հրահանգիչ, փ/ծ փոխգնդապետ Տաթևիկ Ալիխանյան,

է. ՔԾ ՃԿԱԿ մոնիտորինգի և կանխատեսման բաժնի կրտսեր հրահանգիչ, փ/ծ ավագ ենթասպա Լիանա Պապիկյան.

2) խաղարկման խումբ՝

ա. ՔԾ ՃԿԱԿ ՕՀԲ ՕՀ պետ, փ/ծ փոխգնդապետ Արա Սահակյան (խմբի ղեկավար),

բ. ՔԾ ՃԿԱԿ ՕՀԲ ավագ հրահանգիչ, փ/ծ փոխգնդապետ Կարինե Հարությունյան,

գ. ՔԾ ՃԿԱԿ ՕՀԲ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Արթուր Գասպարյան,

դ. ՔԾ ՃԿԱԿ ՕՀԲ հրահանգիչ, փ/ծ կապիտան Դավիթ Հայրապետյան,

ե. ՔԾ ՃԿԱԿ մոնիտորինգի և կանխատեսման բաժնի հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Սեդա Սարգսյան,

զ. ՔԾ ՃԿԱԿ ՏԱՎԲ կրտսեր հրահանգիչ՝ կայքում տեղեկատվության ապահովման գծով, փ/ծ ենթասպա Ժորա Խաչատրյան.

3) վերլուծության նախապատրաստման խումբ՝

ա. ՔԾ ՃԿԱԿ ՕՀԲ պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Էդգար Շամիրյան (խմբի ղեկավար),

բ. ՔԾ ՃԿԱԿ ՕՀԲ հրահանգիչ, փ/ծ ավագ լեյտենանտ Սիրանուշ Ավետիսյան,

գ. ՔԾ ՃԿԱԿ ՏԱՎԲ հրահանգիչ, փ/ծ մայոր Լիլիթ Ալեքսանյան,

դ. ՔԾ ՃԿԱԿ ՏԱՎԲ կրտսեր հրահանգիչ՝ կայքում տեղեկատվության ապահովման գծով, փ/ծ ենթասպա Սեդա Գրիգորյան:

4. Ուսումնավարժությանը ներգրավել՝

1) ՔԾ բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության տեխնածին վթարների բաժնի պետ, փ/ծ գնդապետ Նվեր Մարգարյանին.

2) ՔԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ, փ/ծ փոխգնդապետ Էդվարդ Սարոյանին.

3) ՔԾ ՃԿԱԿ ծառայողներին:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝ ապահովել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2023 թվականի հունիսի 14-ը ներկայացնել ուսումնավարժության ղեկավարի հաստատմանը:

6. Ուսումնավարժության ղեկավարին՝ ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2023 թվականի հունիսի 14-ին:

7. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ՆԳՆ ՓԾ տնօրենի տեղակալ, փ/ծ գնդապետ Եգոր Կարապետյանին:

8. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Փ/Ծ ԳՆԴԱՊԵՏ Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ 17.05.2023թ. **Կ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**